ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության 2019-2020 թթ. պետական բյուջեների եկամուտների վերաբերյալ (հունվար)

ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի եկամուտներ (մլրդ դրամ)



ՀՀ 2019-2020թթ. պետական բյուջեների եկամուտները (մլրդ դրամ)







ՀՀ 2020 թ. պետական բյուջեի հունվար ամսվա եկամուտները կազմել են 151.3 մլրդ դրամ, որը կազմում է 2020թ. պետական բյուջեի առաջին եռամսյակի հաստատված ծրագրային ցուցանիշի 42.3%-ը: 2020թ. հունվարի եկամուտները 39.0 մլրդ դրամով, կամ 34.7%-ով ավել են քան 2019թ. հունվարի եկամուտները:

Հարկային եկամուտները և պետական տուրքերը 2020թ. հունվարին կազմել են 146.7 մլրդ դրամ, որը 2020թ. պետական բյուջեի առաջին եռամսյակի հաստատված ծրագրային ցուցանիշի 43.1%-ն է: 2019թ. հունվարի համեմատությամբ հարկային եկամուտները և պետական տուրքերը ավել են 44.8 մլրդ դրամով, կամ 44.0%-ով:

Պաշտոնական դրամաշնորհները 2020թ. հունվարին կազմել են 0.3 մլրդ դրամ, որը 2020թ. պետական բյուջեի առաջին եռամսյակի հաստատված ծրագրային ցուցանիշի 6.1%-ն է: 2020թ. հունվարի պաշտոնական դրամաշնորհները 2019թ. հունվարի համեմատությամբ նվազել են 4.5 մլրդ դրամով, կամ 93.1%-ով:

Պետական բյուջեի այլ եկամուտները 2020թ. հունվարին կազմել են 4.3 մլրդ դրամ, որը 2020թ. պետական բյուջեի առաջին եռամսյակի հաստատված ծրագրային ցուցանիշի 35.0%-ն է: Այլ եկամուտները 2019թ. հունվարի համեմատությամբ նվազել են 1.3 մլրդ դրամով կամ 23.2%-ով:

Պետական բյուջեի եկամուտները՝ ավելացված արժեքի հարկի գծով 2020թ. հունվարին կազմել են 51.2 մլրդ դրամ, ինչը 2019թ. հունվարի համեմատությամբ ավել է 12.6 մլրդ դրամով, կամ 32.6%-ով:

Ակցիզային հարկի գծով պետական բյուջեի եկամուտները 2020թ. հունվարին կազմել են 16.0 մլրդ դրամ, ինչը 2019թ. հունվարի համեմատությամբ ավել է 5.6 մլրդ դրամով կամ 53.8%-ով: Ընդ որում, հանրապետություն ներմուծվող ենթաակցիզային ապրանքների հարկումից եկամուտները կազմել են 3.2 մլրդ դրամ, կամ 2019թ. հունվարի համեմատությամբ 1.5 մլրդ դրամով կամ 88.2 տոկոսային կետով ավելի, իսկ հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների հարկումից 2020թ. հունվարին ստացվել է 12.8 մլրդ դրամ, ինչը 2019թ. համեմատությամբ աճել է 4.0 մլրդ դրամով կամ 45.5 տոկոսային կետով:

2020 թվականի հունվար ամսվա ընթացքում շահութահարկի և բնապահպանական հարկի ու բնօգտագործման վճարների ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 10.5 մլրդ դրամ և 2.1 մլն դրամ, ինչը 2019 թվականի ցուցանիշների համեմատ ավել է՝ համապատասխանաբար 11.9 և 3.0 մլրդ դրամով:

Եկամտային հարկի գծով 2020թ. հունվարին արձանագրվել է 45.7 մլրդ դրամի եկամուտ, ինչը 2019թ. հունվարի համեմատությամբ ավել է 7.4 մլրդ դրամով կամ 19.3 տոկոսով:

Մաքսատուրքերի գծով եկամուտները 2020թ. հունվարին կազմել են 5.3 մլրդ դրամ, ինչը 20198թ. հունվարի համեմատությամբ նվազել է 0.2 մլրդ դրամով կամ 3.6 տոկոսով:

Շրջանառության հարկի գծով 2020թ. հոնվարին արձանագրվել է 8.0 մլրդ դրամի եկամուտ, 2019թ. հունվարի համեմատությամբ աճը կազմել է 1.3 մլրդ դրամ կամ 19%:

Սոցիալական վճարների գծով եկամուտները 2020թ. հունվարին կազմել են 2.2 մլրդ դրամ, ինչը 2019թ. հունվարի համեմատությամբ աճել է 0.7 մլրդ դրամով կամ 46.7 տոկոսով:

2020թ. հունվարին պետական տուրքերի գծով եկամուտները կազմել են 2.8 մլրդ դրամ, ինչը 2019թ. հունվարի համեմատությամբ ավել է 0.7 մլրդ դրամով, կամ 33.3 տոկոսով:

Այլ հարկային եկամուտների գծով 2020թ. հունվարին արձանագրվել է 3.0 մլրդ դրամ, ինչը 2019թ. համեմատությամբ ավելի է 2.0 մլրդ դրամով կամ 212.5 տոկոսով:

Տեղեկատվության աղբյուրներ են հանդիսացել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության ինտերնետային կայքում հրապարակված ՀՀ 2019-2020թթ. պետական բյուջեների կատարման ամսական ամփոփ բնութագրերը